ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ~~ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ~~ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

1. Սույն օրենքով սահմանվում են ~~Մարդու իրավունքների եվրոպական դատարանում (այսուհետ՝ Եվրոպական դատարան) Հայաստանի Հանրապետության~~Միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի ~~ներկայացուցչի~~ (այսուհետ՝ Ներկայացուցիչ) կարգավիճակը, լիազորությունների շրջանակը, նշանակման կարգը, Ներկայացուցչի գրասենյակի (այսուհետ՝ Գրասենյակ) կարգավիճակը, ինչպես նաև դրանց հետ կապված այլ հարաբերություններ:

. 2. Սույն օրենքի իմաստով Ներկայացուցչի գործունեությունն -ընդգրկում է ~~հետևյալ ատյանները~~՝

1) *Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Եվրոպական դատարան),*
2) *Արդարադատության միջազգային դատարանը,*
3) *միջազգային արբիտրաժը,*
~~1)~~ *հաշտարարությունը,*-
4)
5) *օտարերկրյա դատարանները:*

Հոդված 1.1. Օրենքում կիրառվող հասկացությունները

1. Սույն Օրենքի իմաստով՝
   1) ~~*Սույն օրենքի իմաստով միջազգային արբիտրաժը*~~ միջազգային արբիտրաժային կանոնների հիման վրա գործող վեճը լուծող մարմինն է, անկախ դրա՝ մշտապես գործող արբիտրաժային հաստատության կողմից կամ առանց նման հաստատության իրականացվելու հանգամանքի.;
   ~~1) 3. Սույն օրենքի իմաստով~~ *օտարերկրյա դատարանը* այլ պետության ազգային դատարանն է, -որտեղ Հայաստանի Հանրապետությունը հանդես է գալիս որպես հայցվող, պատասխանող կամ երրորդ կողմ.;
   2)
   3) *հաշտարարությունը* գործընթաց է, որն ուղղված է կողմերի համաձայնությամբ իրենց միջև առկա վեճն անկողմնակալ երրորդ անձի՝ հաշտարարի օգնությամբ լուծելուն:

Հոդված 2. Ներկայացուցչի գործունեությունը կանոնակարգող օրենսդրությունը

1. Ներկայացուցչի գործունեությունը կանոնակարգող օրենսդրությունը ներառում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» 1950 թվականի նոյեմբերի 4-ի կոնվենցիան (այսուհետ՝ Եվրոպական կոնվենցիա), ~~«~~Արդարադատության միջազգային դատարանի կանոնադրությունը, «Պետությունների և այլ պետությունների քաղաքացիների միջև ներդրումային վեճերի լուծման մասին» 1965 թվականի մարտի 18-ի կոնվենցիան, Հայաստանի Հանրապետության վավերացրած այլ միջազգային պայմանագրերը,
սույն օրենքը, ~~Հայաստանի Հանրապետության վավերացրած այլ միջազգային պայմանագրեր,~~ ինչպես նաև Հայաստանի Հանրապետության այլ իրավական ակտեր:

2. Սույն օրենքով սահմանված լիազորություններն իրականացնելիս Ներկայացուցիչն առաջնորդվում է նաև Եվրոպական դատարանի կանոնակարգով և Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի (այսուհետ՝ Նախարարների կոմիտե) վճիռների և բարեկամական կարգավորումների պայմանների կատարման վերահսկողության վերաբերյալ կանոնակարգով, կիրառելի արբիտրաժային և հաշտարարության կանոններով, ~~Միավորված ազգերի կազմակերպության~~ Արդարադատության միջազգային դատարանի ~~կանոնադրությամբ~~կանոնակարգով:

Հոդված 3. Ներկայացուցչի կարգավիճակը

1. Ներկայացուցչի պաշտոնը վարչապետի աշխատակազմի կառուցվածքում ընդգրկված պետական վարչական պաշտոն է:

~~2. Ներկայացուցիչը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության շահերը Եվրոպական դատարանում, կազմակերպում Եվրոպական դատարանի՝ Հայաստանի Հանրապետության վերաբերյալ վճիռների և որոշումների կատարումը, ինչպես նաև նպաստում Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում մարդու իրավունքների եվրոպական չափանիշների ներդրմանը:~~

3. Ներկայացուցիչը համակարգում և վերահսկում է Գրասենյակի գործունեությունը: Գրասենյակի գործառույթների իրականացմամբ ստեղծված ~~փաստաթղթերն~~ փաստաթղթերը ստորագրում և սահմանված դեպքերում կնքում է Ներկայացուցիչը: Այս լիազորությունները Ներկայացուցչի որոշմամբ կարող են պատվիրակվել Գրասենյակի ղեկավարին, ինչպես նաև Գրասենյակի ղեկավարի տեղակալին՝ նրա համակարգմանը վերապահված բնագավառում:

4. Ներկայացուցիչն իր լիազորություններն իրականացնելիս պարտավոր է ցուցաբերել քաղաքական չեզոքություն:

5. Ներկայացուցիչն իր պաշտոնավարումից հետո չի կարող ներկայացնել կամ խորհրդատվություն տրամադրել որևէ անձի՝ սույն օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով նախատեսված ատյաններում քննության փուլում (հաշտարարության գործընթացում) գտնվող այն գործերի առնչությամբ, որոնք ստացվել են կամ որոնց վարույթը սկսվել է իր պաշտոնավարման ժամանակահատվածում կամ որոնցով կազմակերպել կամ իրականացրել է Հայաստանի Հանրապետության շահերի ներկայացումը: ~~Ներկայացուցիչն իր պաշտոնավարումից հետո չի կարող ներկայացնել կամ խորհրդատվություն տրամադրել որևէ անձի՝ Եվրոպական դատարանում քննության փուլում գտնվող այն գործերի առնչությամբ, որոնք Եվրոպական դատարանից ստացվել են իր պաշտոնավարման ժամանակահատվածում կամ որոնցով Եվրոպական դատարանում ներկայացրել է Հայաստանի Հանրապետության շահերը:~~

6. Ներկայացուցիչը չի կարող սույն օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով նախատեսված ատյաններում վարել բանակցություններ կողմի և (կամ) վերջինիս ներկայացուցչի հետ կամ կազմակերպել կամ իրականացնել Հայաստանի Հանրապետության շահերի ներկայացումն այն գործով, որում ունի անձնական շահ կամ եղել է իբրև այդ գործով կողմի ներկայացուցիչ կամ փաստաբան կամ տրամադրել խորհրդատվություն կամ հանդես եկել որևէ այլ կարգավիճակով:~~Ներկայացուցիչը չի կարող Եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության շահերը ներկայացնել այն գործով, որում ունի անձնական շահ կամ Եվրոպական դատարանում եղել է իբրև այդ գործով կողմի ներկայացուցիչ կամ փաստաբան կամ տրամադրել խորհրդատվություն կամ հանդես եկել որևէ այլ կարգավիճակով:~~

Հոդված 4. Ներկայացուցչին ներկայացվող պահանջները և նշանակման կարգը

1. Ներկայացուցիչ կարող է նշանակվել 30 տարին լրացած, բարձրագույն իրավաբանական կրթություն և առնվազն 5 տարվա իրավաբանի մասնագիտական աշխատանքային փորձ ունեցող, միջազգային իրավունքին, ինչպես նաև մարդու իրավունքների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, միջազգային ակտերին, հայերենին, ~~և~~ անգլերենին ~~կամ ֆրանսերենին~~~~և այլ~~~~որևէ~~ օտար լեզվի տիրապետող միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացին:

2. Ներկայացուցչին նշանակում և ազատում է վարչապետը: Ներկայացուցչի պաշտոնը թափուր մնալու դեպքում վարչապետը երկամսյա ժամկետում նշանակում է նոր Ներկայացուցիչ:

Հոդված 6. Ներկայացուցչի Գրասենյակը

1. Սույն օրենքով Ներկայացուցչին վերապահված լիազորությունների արդյունավետ իրականացումն ապահովելու նպատակով վարչապետի աշխատակազմի կառուցվածքում ստեղծվում է Գրասենյակ:

2. Գրասենյակի ղեկավարը հաշվետու է վարչապետին և Ներկայացուցչին:

3. Գրասենյակը՝

1) օժանդակում է Եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության շահերի ներկայացմանը, ինչպես նաև Եվրոպական դատարանի՝ Հայաստանի Հանրապետության վերաբերյալ վճիռների և որոշումների կատարման գործընթացի կազմակերպմանը.

2) օժանդակում է Արդարադատության միջազգային դատարանում Հայաստանի Հանրապետության շահերի ներկայացմանը, ինչպես նաև Արդարադատության միջազգային դատարանի՝ Հայաստանի Հանրապետության վերաբերյալ վճիռների և որոշումների կատարման գործընթացի կազմակերպմանը.

3) օժանդակում է միջազգային արբիտրաժներում, օտարերկրյա դատարաններում Հայաստանի Հանրապետության շահերի –ներկայացմանը, ինչպես նաև արբիտրաժային կամ օտարերկրյա դատարանների վճիռների և որոշումների ճանաչման և կատարման, ինչպես նաև դրանց բողոքարկման գործընթացի կազմակերպմանը.

օժանդակում է հաշտարարության կարգով Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ վեճի լուծմանը.

4) աջակցում է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում մարդու իրավունքների միջազգային չափանիշների ներդրմանը~~օժանդակում Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում մարդու իրավունքների միջազգային չափանիշների ներդրմանը:~~~~Գրասենյակը՝~~

~~1) օժանդակում է Եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության շահերի ներկայացմանը.~~

~~2) օժանդակում է Եվրոպական դատարանի՝ Հայաստանի Հանրապետության վերաբերյալ վճիռների և որոշումների կատարման գործընթացի կազմակերպմանը.~~

5) ~~3) աջակցում է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում մարդու իրավունքների եվրոպական չափանիշների ներդրմանը:~~

~~4. Գրասենյակն աջակցում է Ներկայացուցչին Հայաստանի Հանրապետության շահերը Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային այլ ատյաններում ներկայացնելիս:~~

5. Գրասենյակի ղեկավարի տեղակալը և կառուցվածքային ստորաբաժանումների աշխատողները քաղաքացիական ծառայողներ են, որոնք պաշտոնի նշանակվում և պաշտոնից ազատվում են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով:

6. Գրասենյակը գործում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, օրենքների, այլ իրավական ակտերի և իր կանոնադրության հիման վրա:

ԳԼՈՒԽ 3

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 7. Ներկայացուցչի լիազորությունները Հայաստանի Հանրապետության շահերը Եվրոպական դատարանում ներկայացնելիս

1. Ներկայացուցիչը՝

1) Հայաստանի Հանրապետության դեմ Եվրոպական դատարան ներկայացված և Հայաստանի Հանրապետությանը կոմունիկացված գանգատների, միջանկյալ միջոցի կիրառման վերաբերյալ պահանջի, ինչպես նաև Եվրոպական դատարանից ստացված այլ կոմունիկացիայի առնչությամբ Հայաստանի Հանրապետության դիրքորոշումը ներկայացնում է Եվրոպական դատարան.

2) Հայաստանի Հանրապետության դեմ Եվրոպական դատարան ներկայացված և Հայաստանի Հանրապետությանը կոմունիկացված գանգատների վերաբերյալ գործերը բարեկամական կարգավորման ձևով լուծելու նպատակով գանգատ ներկայացրած կողմի հետ վարում է բանակցություններ, կնքում է բարեկամական կարգավորումներ.

3) Հայաստանի Հանրապետության դեմ Եվրոպական դատարան ներկայացված և Հայաստանի Հանրապետությանը կոմունիկացված գանգատների վերաբերյալ գործերով հանդես է գալիս միակողմանի հայտարարությամբ.

4) ~~սեփական նախաձեռնությամբ կամ իրավասու մարմնի միջնորդության հիման վրա անհրաժեշտության դեպքում վարչապետի կամ իրավասու մարմինների հետ խորհրդակցելուց հետո~~ Եվրոպական դատարանում գործի քննությանը ներգրավվում է որպես երրորդ կողմ և Հայաստանի Հանրապետության դիրքորոշումը ներկայացնում է Եվրոպական դատարան.

5) կազմակերպում է Եվրոպական դատարանի կողմից առանձին գանգատի առնչությամբ կիրառված միջանկյալ միջոցի ~~պայմանների~~ կատարման գործընթացը.

6) Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործերով Եվրոպական դատարանի Պալատի վճիռը Եվրոպական դատարանի Մեծ պալատի քննությանը հանձնելու պահանջով միջնորդություն է ներկայացնում Եվրոպական դատարան:~~Ներկայացուցիչը՝~~

~~1) Հայաստանի Հանրապետության դիրքորոշումը ներկայացնում է Եվրոպական դատարան.~~

~~2) գանգատ ներկայացրած կողմի հետ վարում է բանակցություններ՝ բարեկամական կարգավորման ձևով խնդրի լուծման նպատակով կամ հանդես գալիս միակողմանի հայտարարությամբ.~~

~~3) սեփական նախաձեռնությամբ կամ իրավասու մարմնի միջնորդության հիման վրա անհրաժեշտության դեպքում վարչապետի կամ իրավասու մարմինների հետ խորհրդակցելուց հետո Եվրոպական դատարանում գործի քննությանը ներգրավվում է որպես երրորդ կողմ.~~

~~4) կազմակերպում է Եվրոպական դատարանի կողմից առանձին գանգատի առնչությամբ կիրառված միջանկյալ միջոցի պայմանների կատարման ընթացքը.~~

~~5) Եվրոպական դատարանի Պալատի վճիռը Եվրոպական դատարանի Մեծ պալատի քննությանը հանձնելու միջնորդություն է ներկայացնում:~~

2. Ներկայացուցիչն իրավասու է Հայաստանի Հանրապետության անունից ներկայացնելու միջպետական գանգատ ~~միայն~~ Կառավարության որոշման հիման վրա:

Հոդված 8. Ներկայացուցչի լիազորությունները Եվրոպական դատարանի վճռի կամ որոշման կատարման փուլում

1. Ներկայացուցիչը՝

1) իրավասու մարմինների հետ խորհրդակցելուց հետո կազմակերպում է Հայաստանի Հանրապետության վերաբերյալ վճռի կամ որոշման կատարման գործընթացը՝ այդ թվում առաջարկելով Հայաստանի Հանրապետության վերաբերյալ վճռի կամ որոշման կատարմանն ուղղված միջոցառումներ.

~~կազմակերպում է Հայաստանի Հանրապետության վերաբերյալ վճռի կամ որոշման կատարման գործընթացը.~~

2) վճռի կատարման փուլում բարեկամական կարգավորման ձևով խնդրի լուծման նպատակով վարում է բանակցություններ, կնքում է բարեկամական կարգավորումներ ~~առաջարկում է Հայաստանի Հանրապետության վերաբերյալ վճռի կամ որոշման կատարմանն ուղղված միջոցառումներ~~.

3) Նախարարների կոմիտեի քննարկմանն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության վերաբերյալ վճռի կամ որոշման կատարման առնչությամբ տեղեկատվություն.

4) կազմակերպում է Հայաստանի Հանրապետության վերաբերյալ վճռի կամ որոշման կատարման շրջանակներում Նախարարների կոմիտեից ստացված հարցումներին պատասխանելու գործընթացը.

5) մասնակցում է Նախարարների կոմիտեի նիստերին:

Հոդված 8.1 Ներկայացուցչի լիազորությունները Հայաստանի Հանրապետության շահերը Արդարադատության միջազգային դատարանում ներկայացնելիս

1. Ներկայացուցիչը՝

~~կազմակերպում և իրականացնում է Հայաստանի Հանրապետության շահերի պաշտպանությունը Արդարադատության միջազգային դատարանում.~~

1) Կառավարության որոշման հիման վրա Հայաստանի Հանրապետության անունից Արդարադատության միջազգային դատարան է ներկայացնում հայցադիմում և հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդություն.
2) Արդարադատության միջազգային դատարանում Հայաստանի Հանրապետության դեմ իրավական գործընթաց մեկնարկելու դեպքում ներկայացնում է Հայաստանի Հանրապետության դիրքորոշումը և առարկությունները.
3) կազմակերպում է Արդարադատության միջազգային դատարանի վճիռների և որոշումների կատարման գործընթացը, մասնակցում է վճիռների և որոշումների կատարմանն ուղղված Միավորված ազգերի կազմակերպության շրջանակներում իրականացվող միջոցառումներին.
4) կազմակերպում և իրականացնում է Արդարադատության միջազգային դատարանում Հայաստանի Հանրապետության շահերի պաշտպանությանն ուղղված այլ միջոցառումներ.
5) մասնակցում է Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործերով վճիռների և որոշումների կատարման վերաբերյալ Միավորված ազգերի կազմակերպության կազմակերպված գործընթացներին:

Հոդված 8.2 Ներկայացուցչի լիազորությունները Հայաստանի Հանրապետության շահերը միջազգային արբիտրաժներում և օտարերկրյա դատարաններում ներկայացնելիս

1. Ներկայացուցիչը՝

1) Հայաստանի Հանրապետության դեմ արբիտրաժային կամ վեճը դատարանին հանձնելու վերաբերյալ ծանուցում ստանալու դեպքում ըստ անհրաժեշտության բանակցություններ է վարում կողմի հետ վեճն արտադատական կարգով լուծելու նպատակով.
2) Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ արբիտրաժային վեճերի շրջանակում մասնակցում է արբիտրաժային տribունալի կազմավորմանը՝ կիրառելի արբիտրաժային կանոնների համաձայն նշանակելով Հայաստանի Հանրապետության արբիտրին, բանակցելով կողմի հետ նախագահող արբիտրի նշանակման հարցի շուրջ և այլ անհրաժեշտ ~~գործառույթներ~~գործողություններ իրականացնելով.
3) Հայաստանի Հանրապետության դեմ ներկայացված արբիտրաժային ծանուցման, դիմումի կամ դատական հայցի առնչությամբ ներկայացնում է Հայաստանի Հանրապետության դիրքորոշումը~~ վեճը լուծող համապատասխան մարմին~~.
4) սեփական նախաձեռնությամբ կամ իրավասու մարմնի միջնորդության հիման վրա, անհրաժեշտության դեպքում վարչապետի կամ իրավասու մարմինների հետ խորհրդակցելուց հետո, օտարերկրյա դատարանների վարույթում գտնվող գործի քննությանը ներգրավվում է որպես երրորդ կողմ և ներկայացնում է Հայաստանի Հանրապետության դիրքորոշումը.
5) Կառավարության որոշման հիման վրա վեճը հանձնում է արբիտրաժային տribունալի կամ օտարերկրյա դատարանի քննությանը.
6) ներկայացնում է Հայաստանի Հանրապետության շահերը միջազգային արբիտրաժում և օտարերկրյա դատարաններում Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ քննվող

գործերով ~~ներկայացնում է Հայաստանի Հանրապետության շահերը միջազգային արբիտրաժում և օտարերկրյա դատարաններում Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ քննվող գործերով.~~

7) ըստ անհրաժեշտության սահմանված կարգով բողոքարկում է օտարերկրյա դատարանների որոշումները (վճիռները).

8) ըստ անհրաժեշտության արբիտրաժային որոշումը (վճիռը) չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմում է ներկայացնում.

կազմակերպում է արբիտրաժային և օտարերկրյա դատարանների որոշումների (վճիռների) ճանաչումը և կատարումը:

~~1) 2. Սույն օրենքի իմաստով միջազգային արբիտրաժը միջազգային արբիտրաժային կանոնների հիման վրա գործող վեճը լուծող մարմինն է, անկախ դրա՝ մշտապես գործող արբիտրաժային հաստատության կողմից կամ առանց նման հաստատության իրականացվելու հանգամանքի:~~

9) ~~3. Սույն օրենքի իմաստով օտարերկրյա դատարանը այլ պետության ազգային դատարանն է, որտեղ Հայաստանի Հանրապետությունը հանդես է գալիս որպես հայցվոր, պատասխանող կամ երրորդ կողմ:~~

Հոդված 8.3 Ներկայացուցչի լիազորությունները Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ վեճը հաշտարարության կարգով լուծելիս

1. Ներկայացուցիչը՝

1) Հայաստանի Հանրապետության անունից բանակցություններ է վարում վեճի կողմի կամ վերջինիս ներկայացուցչի հետ.

2) Հայաստանի Հանրապետության անունից կնքում է հաշտարարության կարգով վեճը լուծելու վերաբերյալ համաձայնագրեր (պայմանագրեր).

3) Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ վեճի լուծման նպատակով ներգրավում է հաշտարարների կամ հաշտարարական ծառայություններ մատուցող գրասենյակների.

4) ներկայացնում է Հայաստանի Հանրապետության շահերը հաշտարարության ընթացքում.

5) անհրաժեշտության դեպքում վարչապետի կամ իրավասու մարմինների հետ խորհրդակցելուց հետո կնքում է հաշտության համաձայնություններ և կազմակերպում է հաշտության համաձայնությունների կատարումը:

~~2. Սույն օրենքի իմաստով հաշտարարությունը գործընթաց է, որն ուղղված է կողմերի համաձայնությամբ իրենց միջև առկա վեճն անկողմնակալ երրորդ անձի՝ հաշտարարի օգնությամբ հաշտությամբ լուծելուն:~~

Հոդված 9. Ներկայացուցչի լիազորությունները Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում մարդու իրավունքների ~~եվրոպական~~ միջազգային չափանիշների ներդրման ոլորտում

1. Ներկայացուցիչը կարող է՝

1) իրավասու մարմիններին ներկայացնել մարդու իրավունքների միջազգային ~~և եվրոպական~~ իրավական չափանիշներին համապատասխանեցման վերաբերյալ օրենսդրական առաջարկություններ.

2) մինչև մարդու իրավունքներին և ազատություններին վերաբերող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի ընդունումը դրանց վերաբերյալ իրավասու մարմին ներկայացնել գրավոր կարծիք.

3) ուսումնասիրել ոլորտի միջազգային փաստաթղթերը, նախադեպային իրավունքը, վերաբերելի միջազգային մարմինների զեկույցները, ինչպես նաև ոլորտի ներպետական պրակտիկան, և անհրաժեշտության դեպքում իրականացնել ոլորտի բարելավման և մարդու իրավունքների միջազգային իրավական չափանիշներին համապատասխանեցման վերաբերյալ գործողություններ.

4) մարդու իրավունքների միջազգային իրավական չափանիշների ներդրման նպատակով իրականացնել ծրագրեր՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով միջազգային կազմակերպությունների կամ այլ կառույցների հետ~~ ուսումնասիրել համապատասխան ոլորտների պրակտիկան և անհրաժեշտության դեպքում հանդես գալ բարելավման և մարդու իրավունքների միջազգային և եվրոպական իրավական չափանիշներին համապատասխանեցման վերաբերյալ առաջարկություններով~~:

Հոդված 10. Ներկայացուցչի այլ լիազորությունները

1. Ներկայացուցիչն իրավասու է նաև՝

1) իր լիազորություններն իրականացնելիս ներգրավելու փորձագետների և մասնագետների, այդ թվում՝ գիտական կամ այլ հաստատություններից.

2) իր լիազորությունների շրջանակներում համագործակցելու միջազգային և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, ինչպես նաև այլ կառույցների հետ.

3) Եվրոպական դատարանին առաջարկելու այն անձանց թեկնածությունները, որոնք, Եվրոպական դատարանի կանոնակարգի համաձայն, կարող են հանդես գալ կոնկրետ գործով (ad hoc) դատավորի կարգավիճակով, ինչպես նաև հետ կանչելու նրանց (ad hoc) դատավորի կարգավիճակից.

4) Ներդրումային վեճերի կարգավորման միջազգային կենտրոնին առաջարկելու Հայաստանի Հանրապետության կողմից նշանակվող արբիտրների և հաշտարարների թեկնածուներին.

~~Վարչապետի հանձնարարությամբ Հայաստանի Հանրապետության շահերը ներկայացնելու Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային այլ ատյաններում.~~

5) ներկայացնել դիրքորոշում Հայաստանի Հանրապետության անունից կնքվող երկկողմ և բազմակողմ համաձայնագրերի նախագծերի, օտարերկրյա ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ կնքվող այն պայմանագրերի նախագծերի վերաբերյալ, որոնցով որպես վեճի լուծման մեխանիզմ նախատեսված է միջազգային արբիտրաժը՝ ըստ անհրաժեշտության համագործակցելով իրավասու մարմինների հետ. ~~վերանայել ներկայացնել դիրքորոշում Հայաստանի Հանրապետության անունից կնքվող երկկողմ և բազմակողմ ներդրումային համաձայնագրերի նախագծերիր, օտարերկրյա ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ կնքվող այն պայմանագրերի նախագծերի վերաբերյալր, որոնցով որպես վեճի լուծման մեխանիզմ նախատեսված է միջազգային արբիտրաժը. իրականացնելու Եվրոպական դատարանի կանոնակարգով կողմին վերապահված, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության վերաբերյալ վճռի կամ որոշման կատարումից բխող այլ լիազորություններ~~

6) իրավասու մարմինների հետ համատեղ մշակել իրավական փաստաթղթեր և օժանդակել համապատասխան միջազգային կազմակերպություններում դրանց շրջանառմանը:

Հոդված 12. Եզրափակիչ և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

2. Սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչը, Ներկայացուցիչ գրասենյակի ղեկավարը և Գրասենյակի քաղաքացիական ծառայողները շարունակում են պաշտոնավարել, որպես համապատասխանաբար Միջազգային իրավական հարցերով ներկայացուցիչ, Ներկայացուցչի գրասենյակի ղեկավար և Գրասենյակի քաղաքացիական ծառայողներ: